ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 882 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՄԱՐ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 3-ի N 01.1/14-2/17861-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 4-ի N 02/14/17535-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N ԱԳ/ԱնՄ-2-1/10205-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 06/3-8/40758-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 10,145,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01834959) 2017 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված 27-09/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի գործարանային արտադրության HYUNDAI H-1 2.4 M/T մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 10,145,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշ[illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հա[illegible]յան արդարադատության նախարարություն, Հայաստանի Հ[illegible] և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի [illegible] առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հ[illegible]Շիրակի մարզպետին:

ՆԱԽ[illegible]                                   Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

13/1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
[illegible]
«[illegible]» [illegible] 2017թ.

## « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում »

### ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի սաներին HYUNDAI H-1 M/T մակնիշի մեկ հատ մարդատար ավտոմեքենայով անվճար հիմունքներով երեխաների տեղափոխման խնդիրները լուծելու համար |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 10.145.000,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի սաներն ու անձնակազմը |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ սեպտեմբերի 27-ից մինչև 2017թ. հոկտեմբերի 27-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 27-ը ընկած ժամանակահատվածում գնել և անհատույց հանձնել Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ին HYUNDAI H-1 2.4 M/T մակնիշի մեկ հատ մարդատար ավտոմեքենա՝ 10.145.000,00 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՍԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ-ից HYUNDAI H-1 2.4 M/T մակնիշի մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 10.145.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Շիրակի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

18/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի Ν Մ - 883 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 3-ի Ν 01.1/14-2/17954-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 9-ի Ν 02/14/17831-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 5-ի Ν 06/3-8/39968-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 657,664 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի համար լրացուցիչ տեղեկատվական վահանակների պատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԴՈՌՋՆԱԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00853017) 2017 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված Ν Ծ-ԱԾ-04/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեղեկատվական վահանակների պատրաստում՝ 657,664 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության [illegible], կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների [illegible] Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական [illegible] կոմիտե:

ՆԱԽԱԳ[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

13/2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«03» հոկտեմբերի 2017թ.

## «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի համար լրացուցիչ տեղեկատվական վահանակների պատրաստում»
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Համապատասխանեցնել մեր կողմից կառուցած Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհը ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգի միջազգային ստանդարտներին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 657.664,00 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հոկտեմբերի 02-ից մինչեւ 2017թ նոյեմբերի 02-ը: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ հոկտեմբերի 02-ց մինչեւ 2017թ. նոյեմբերի 02-ը անհրաժեշտ տեղեկատվական վահանակներ պատրաստել Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի համար 657.664,00 արժողությամբ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ԴՈՌՋՆԱԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն տեղեկատվական վահանակների պատրաստում՝ 657.664,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կառավարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

13/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 884 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 01.1/14-2/18304-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 16-ի N 06/3-8/41816-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված սայլակների ու հաշմանդամների համար նախատեսված խնամքի պարագաների (638 կգ քաշով, 8,000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 750 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Սարքերն անհատույց հանձնվելու են Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ Արցախի Ազատամարտի հաշմանդամ վետերանների միջև բաշխելու համար:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 885 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 01.1/14-2/18401-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/41073-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված հեռուստատեխնիկայի (2 տեղ, 818 lbs ընդհանուր քաշով, 80,745 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4,085 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Սարքերն անհատույց հանձնվելու են Արցախի Հանրապետության հանրային հեռուստատեսությանը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 886 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 01.1/14-2/17657-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 3-ի N 06/3-8/39477-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վարդան Կիրոյի Կիրոյանցի (անձնագիր՝ N 03 05 546287, տրված՝ 07.09.2004թ.) կողմից «Ստրոյ-տեկ» կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական ապրանքների և մանկական խաղալիքների (1 կոնտեյներ, 22,011 կգ ընդհանուր քաշով, 792,597 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 887 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒՍԼԱՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 01.1/14-2/18399-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 06/3-8/41140-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Դիմոգլո Վիտալի Դմիտրիի (անձնագիր՝ 4610 N 932118, տրված՝ 20.03.2010թ.) կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ռուսլան Իսրայելյանի (անձնագիր՝ AH0558147, տրված՝ 070 կողմից, 22.04.2008թ.) հասցեով ստացված կանացի, տղամարդու և մանկական նոր հագուստի ու կոշիկների (3 պատվանդան, 1,746 կգ ընդհանուր քաշով, 1,522,877 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 888 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/188701-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 06/3-8/ 41129-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արեգջեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06929968) 2017 թվականի հոկտեմբերի 6-ին N 06/10/2017 կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Լոռու մարզի Դեբետ համայնքի Սմարթ կենտրոնի համար տնտեսական և կենցաղային կեղտաջրերի խոր կենսաբանական մաքրման կայանի ձեռքբերում ու մոնտաժում՝ 17,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 889 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 01.1/14-2/18485-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 06/3-8/41128-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սիփիլիթաս» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 02589506) 2017 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված N 1918-060917 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության շրջանակներում երկու ֆիլմի պատրաստում՝ 2,391,450 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 890 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N Մ-641-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 01.1/14-2/18489-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/41090-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի բարեկարգում» ծրագրի մասին» N Մ-641-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2017 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2018 թվականի փետրվարի 28-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 891 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՇՈՂԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 4-ի N 01.1/14-2/17876-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-4/39198-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին» N Մ-318-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1,500,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «2,500,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշ[illegible] Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայա[illegible] աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությ[illegible] Հանրապետության կառավարությանն առընթեր պետական ե[illegible]

ՆԱԽԱ[illegible]    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

13/3.2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության
[illegible] Գ. ՄԻՆԱՍՅԱՆԻ կողմից
5 հոկտեմբերի 2017 թ

«ՀՈԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցություն ցուցաբերել կազմակերպությունում գրանցված սոցիալապես անապահով ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին, սիրիահայ ընտանիքներին: Կազմակերպել ամառային ճամբար 7-16 տարեկան երեխաների համար:<br>Այլրանքի տեսքով ստացված օգնությունը՝ հագուստ, կոշիկներ, կենցաղային իրեր, սնունդ, խաղալիքներ, հիգիենիկ պարագաներ,գրենական պիտույքներ և պայուսակներ տրամադրել, բացի ծրագրում ընդգրկված շահառուներից նաև ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունում հաշվառման վերցված սոցիալապես անապահով ընտանիքներին:<br>Ձմեռային վառելափայտով աջակցություն ցուցաբերել կազմակերպությունում գրանցված մոտ երեսունհինգ սոցիալապես անապահով ընտանիքներին: |
| 2. | Ծրագրի՝ բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի No 66-Ն որոշմամբ հաստատված "Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի"-ի 3-րդ կետի | 3-րդ կետի բ) ենթակետի համաձայն օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը (բարեգործներ) | Անգլիայի «Հայկական ծառայություններ» բարեգործական կազմակերպություն<br>78 Շերվուդ Դրայվ թ. Սպոլդինգ մարզ Լինքոնշայր PE111QP |
| 4. | Ծրագիրն իրականացնողները | Շողիկ հայկական բարեգործական հասարակական կազմակերպություն ք. Երևան, Նոր Արեշ 26փ. 59/1տ, ՀՎՀՀ 00438145 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Ծրագիրը առնչվում է սոցիալական ոլորտին և ընդգրկում է Երևան քաղաքը, Արարատի մարզը, Արագածոտնի մարզը, Տավուշի մարզը, ԼՂՀ: |
| 6. | Ծրագրի բյուջեն (ստացվելիք գումարներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, դրանց ստացման նախատեսվող ժամանակները, կատարման ենթակա ծախսերի նախա- | Ծրագրի բյուջեն 2015թ. ապրիլի 1-ից – 2020թ. դեկտեմբերի 31-ը կազմում է 2.500.000 ԱՄՆ դոլլար: |

| | | |
|---|---|---|
| | տեսվող ուղղությունները, չափերը և ժամկետները) | |
| 7. | Ծրագրի շահառուները կամ նրանց ընտրության սկզբունքները, չափա-նիշները (կարող են նշվել նաև այն միջնորդավորված շահառուները, որոնց կենսապահովման, գործունե-ության պայմանները կբարելավվեն ծրագրի անմիջական շահառուի գործունեության արդյունքում) | Ծրագրի շահառուներն են Երևան քաղաքի (մոտ 450), Արարատի մարզի (մոտ 250), Արագածոտնի մարզի (մոտ 300), Տավուշի մարզի (մոտ 60), ԼՂՀ -ի մոտ (150) սոցիալապես անապահով ընտանիքները, սիրիահայ ընտանիքները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողու-թյունը և/կամ սկիզբը , ավարտը | 2015թ. հունիսի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձ-նացնել) նկարագրությունը և ժամ-կետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը: | Ծրագրի փուլերը<br>1-ին փուլ<br>-2015թ. հունիսի 23-ից -340.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-,Երբ գալիս է սեպտեմբերը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին:<br><br>2-րդ փուլ.<br>-2016թ. հունիսի 21-ից 375.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-,Երբ գալիս է սեպտեմբերը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին:<br><br>3-րդ փուլ<br>-2017թ. հունիսի 20-ից 600.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ |
| | | Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-,Երբ գալիս է սեպտեմբերը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին:<br>Ամենազնաց մեքենայի ներմուծում – 15.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ (մեքենան շահագործվելու է միայն կազմակերպության բարեգործական ծրագրերի շրջանակներում)<br><br>4-րդ փուլ<br>-2018թ. հունիսի 19-ից 390.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-,Երբ գալիս է սեպտեմբերը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին:<br><br>5-րդ փուլ<br>-2019թ. հունիսի 19-ից 390.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-,Երբ գալիս է սեպտեմբերը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին:<br><br>6-րդ փուլ<br>-2020թ. հունիսի 19-ից 405.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-,Երբ գալիս է սեպտեմբերը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվելիք ապարանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը (եթե հայտնի են, ապա պետք է նշել նաև գործարքների կողմերը, միջնորդ իրավաբանական կամ ֆիզիկական անձիք, այդ թվում նաև բարեգործական բեռի ներմուծման հետ կապված)*: | Նախատեսված է բարերարի կողմից բեռի ներմուծում և անհատույց բաշխում<br>2015թ. 1-ին տարին 340.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>2016թ. 2-րդ տարին 375.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>2017թ. 3-րդ տարին 600.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>2018թ. 4-րդ տարին 390.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>2019թ. 5-րդ տարին 390.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>2020թ. 6-րդ տարին 405.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br><br>Ներմուծում<br>1) Հագուստ, կոշիկ, սպիտակեղեն, խաղալիք – 1.750.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ - բաշխման համար<br>2 ) Սնունդ - 45.000 ԱՄՆ - դոլլարին համարժեք դրամ - ճամբարի կազմակերպման և բաշխման համար<br>3) Հիգիենիկ պարագաներ – 55.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ - ճամբարի կազմակերպման և բաշխման համար<br>4) Գույք (սեղան, աթոռ, պահարան, մահճակալ, հեծանիվ, սայլակ) - 200.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ- ճամբարի կազմակերպման համար և բաշխման համար.<br>5) Գրենական պիտույքներ, դպրոցական պայուսակ – 369.200 ԱՄՆ- դոլլարին համարժեք դրամ -,Երբ գալիս է սեպտեմբերըե և ճամբարի փուլերը իրականացնելու համար<br>6) Փայտ կտրելու էլեկտրական գործիք -800 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br>7) Ամենագնաց մեքենայի ներմուցում – 15.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ<br><br>Տեղական շուկայում ձեռքբերում<br>1) հաց, կաթնամթերք, մսամթերք և այլն - 50.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ ճամբարի համար<br><br>Ամառային ճամբար կազմակերպելու համար նախատեսված ծախսեր – 1. Երեխաների տեղափոխում, կոմունալ և ընթացիկ ծախսեր - 15.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ |
| 11. | Անմիջական շահառուների սպառմանը չուղղվող ծախսերը (կազմակերպչական ծախսեր), դրանց կատարման կարգը, այդ ծախսերի չափաբաժիններն ըստ ծրագրի փուլերի, եթե այդպիսիք առանձնացված են: | Ծրագրի համար կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը: | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ Աշխատանքի և սոցալական հարցերի նախարարության, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողվի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը (եթե վերահսկողություն նախատեսվում է): | Ծրագրի իրականացման արդունավետության նկատմամբ վերահսկողություն կիրականացվի Անգլիայի ,Հայկական ծառայություններե բարեգործական հիմնադրամի կողմից:<br>Կառավարության գործունեության վերաբերյալ սահմանված կարգով տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին պետեկամուտների կոմիտեին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 892 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N Մ-645-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 4-ի N 01.1/14-2/17953-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 4-ի N 06/3-8/39718-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 4-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ներքին Բազմաբերդ համայնքում ջրագծի կառուցում» ծրագրի մասին» N Մ-645-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև օգոստոսի 30-ը» բառերը փոխարինել «մինչև հոկտեմբերի 30-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 893 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 01.1/14-2/18887-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/42332-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի անհատ բարերար Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N 4615831330, տրված՝ 27.05.2015 թ.) կողմից «Մաքսիմա» կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (5 տեղ, 73 կգ ընդհանուր քաշով, 75,300 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, բեռի ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՂԵԿԱՎԱՐ — Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՑԱՆԿ

Մոսկվայից ՌԴ քաղաքացի Հայկ Բալայանի կողմից **N421-4868 3154 առ 12.10.2016թ.** ավիաբեռնագրով ուղարկված բեռի

մր. 13/6.3

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեղերի թիվ | Քաշը (կգ) | Արժեքը /ռուբլի/ |
|---|---|---|---|---|
| 1 | Ամրագոտի | 1 | 73 | 1600 |
| 2 | Ուսագոտի | | | 1600 |
| 3 | Ուսապարկ | | | 1000 |
| 4 | Սթրայքբոլի պատյան | | | 4800 |
| 5 | Կողագոտի | 1 | | 1600 |
| 6 | Սթրայքբոլի պարագաներ | | | 4000 |
| 7 | Ուսապարկ փոքր | | | 700 |
| 8 | Ռադիոհաղորդման փոքրիկ ալեհավաք | 1 | | 60000 |
| 9 | Փոքրիկ ալեհավաքի սարք | | | |
| 10 | Լարերով և հենակով հեռուստացույցային ալեհավաք | | | |
| 11 | Radiolink արտադրության կվադրոկոպտեր մոդելի հեռակառավարման վահանակ | | | |
| 12 | Տեսահսկման սարք | | | |
| 13 | Լարով և փոքր բլոկով խցիկների փոխարկիչ | 1 | | |
| 14 | 4 ալիք հաղորդիչ և կրիչ | | | |
| 15 | Աուդիո վիդեո հսկիչ սարք GM-T10W լարերով, ալեհավաքով և փոխանցիչով | | | |
| 16 | PARTOM ալիքային կրիչ լարերով և ալեհավաքով | | | |
| 17 | 10 ալիք AKBIRD կրիչ ալեհավաքով և լարերով | | | |
| 18 | RX -1260D կրիչ | | | |
| 19 | Կվադրոկոպտերի համար շեղբեր | | | |
| 20 | Ալռհավաքի փոքր փոխարկիչ | | | |
| 21 | Կվադրոկոպտերի շեղբի ամրակ | 1 | | |
| 22 | Լրացուցիչ ալեհավաքի ամրակ | | | |
| 23 | Ռադիոտելեմետրիայի հավաքածու | | | |
| 24 | Կաբելային լար | | | |
| 25 | FOX-215A փոքր հաղորդիչ | | | |
| 26 | Ալեհավաքով և լարերով ռադիոմոդեմ | | | |
| 27 | DS3115MG էլեկտրական սարք | | | |
| **Ընդամենը** | | **5** | **73** | **75300** |

Վարչատնտեսական բաժնի պետ

Պողոսյան Կամո

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 894 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/18612-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N ՆՁ/22.2/12986-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 17-ի N 06/3-8/42157-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ամերիկյան Ռոու հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված դեղորայքը (1 տեղ, 12.15 կգ ընդհանուր քաշով, 696 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 131,800 դրամ, Արևմտյան մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 895 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1183-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/18675-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N ՆՁ/22.2/12985-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 17-ի N ԱՑ/ԱնՄ-2-1/10733-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 06/3-8/41820-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (674 տեղ, 7,103 կգ ընդհանուր քաշով, 108,891.40 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6,125 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» մաքսատուն-վարչությունում) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-1183-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02508251

Ա-13/6.9

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - AF-097G-6520
Բեռնագիր - NAM2858681
1 x 40' կոնտեյներներ - CMAU4709909
Կապարակնիք - 20653904
Բեռնված 2017 թ. հոկտեմբերի 4-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Փ. 18005
ԱՄՆ, Հյուսիսային Կարոլինա, Շարլոտ, 28212

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Հայաստան Արցախ Հիմնադրամ
Սաուֆ Լուիզ 117 փող. #315
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Վիկտոր Համբարձումյանի 18 փ., բն. 11
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0033,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ +37493-408-974, +37410-225-229

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵՂ | Քաշը (կգ) | ԱՐԺԵՔ |
|---|---|---|---|
| Անկողնային պարագաներ | 36 | 256.80 | 2,604.00 |
| Հագուստ և աքսեսուարներ | 376 | 2,981.30 | 56,053.00 |
| Նոր կոշիկներ | 5 | 30.60 | 885.00 |
| Դպրոցական պարագաներ (յուղամատիտ, մարկեր, գրիչ, մատիտ, տետրի թուղթ, տետր, ռետին, մատիտի սրիչ, սոսինձ, ուսապայուսակ) | 38 | 670.10 | 4,826.00 |
| Կենցաղային պարագաներ (վարագույր, սրբիչ, սեղանի ծածկոց, զոգնոց, սպունգ) | 15 | 126.70 | 960.40 |
| Խոհանոցային սպասքեղեն (ափսե, բաժակ, կաթ-կարասի) | 16 | 140.00 | 732.60 |
| Ամանորյա տուփեր | 121 | 2,341.00 | 35,980.00 |
| Նոր խաղալիքներ | 2 | 15.10 | 229.60 |
| Կահույք (կողասեղան) | 1 | 17.70 | 30.00 |
| Ասեղնագործության պարագաներ (կտորներ, թելեր, ասեղներ) | 35 | 290.50 | 2,281.50 |
| Երաժշտական գործիքներ (1 տրոմբոն, 3 կլառնետ) | 4 | 11.50 | 832.00 |
| Ժամացույցներ | 4 | 15.10 | 47.00 |
| Բժշկական պարագաներ (հիվանդանոցային ծածկոցներ) | 1 | 6.80 | 69.60 |
| Ավտոպահեստամասեր (հարվածի մեղմիչներ, ռադիատոր, զսպանակներ, ծեռքի կարգավորիչ, մեղմիչ/ռետորներ, հզորության խթանիչ, հովհարի կաղապար, գավազան) | 13 | 117.50 | 2,369.00 |
| Պահեստի համար անհրաժեշտ իրեր (պտուտակահանի հավաքածու, ճանճասպանիկ, ծանրության կրիչ, փայտ կտրելու տակդիր/քառոտնուկ) | 7 | 82.60 | 991.70 |
| | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 674 | 7,103 | 108,891.40 |

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մ-13/6-9

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2017 թ. հոկտեմբեր ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | Տեղ | Բաշխվող քանակը / կգ | Արժեքը ԱՄՆ $ |
|---|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 1000 ընտանիքներ, Ամանորյա տուփերը նախատեսված են շրջանի բոլոր (նորածնից մինչև 18-20 տարեկան) երեխաների և երիտասարդների համար | Անկողնային պարագաներ | 36 | 256.80 | 2,604.00 |
| | Հագուստ և աքսեսուարներ | 376 | 2,981.30 | 56,053.00 |
| | Նոր կոշիկներ | 5 | 30.60 | 885.00 |
| | Դպրոցական պարագաներ (յուղամատիտ, մարկեր, գրիչ, մատիտ, տետրի թուղթ, տետր, ռետին, մատիտի սրիչ, սոսինձ, ուսապայուսակ) | 38 | 670.10 | 4,826.00 |
| | Կենցաղային պարագաներ (վարագույր, սրբիչ, սեղանի ծածկոց, գոգնոց, պայուսակ) | 15 | 126.70 | 960.40 |
| | Խոհանոցային սպասքեղեն (ափսե, բաժակ, կաթ-կարասի) | 16 | 140.00 | 732.60 |
| | Ամանորյա տուփեր | 121 | 2,341.00 | 35,980.00 |
| | Նոր խաղալիքներ | 2 | 15.10 | 229.60 |
| | Կահույք (կողասեղան) | 1 | 17.70 | 30.00 |
| | Ասեղնագործության պարագաներ (կտորներ, թելեր, ասեղներ) | 35 | 290.50 | 2,281.50 |
| | Երաժշտական գործիքներ (1 տրոմբոն, 3 կլառնետ) | 4 | 11.50 | 832.00 |
| | Ճամպրուկներ | 4 | 15.10 | 47.00 |
| | Բժշկական պարագաներ (հիվանդանոցային ծածկոցներ) | 1 | 6.80 | 69.60 |
| Կազմակերպության ծրագրերի համար կենսական անհրաժեշտություն ունեցող Դոջ և Ֆորդ ավտոմեքենաների համար | Ավտոպահեստամասեր (մեղմիչներ, ռադիատոր, զսպանակներ, ծեռքի կարգավորիչ, ռեսորներ, հզորության խցանիչ, հովհարի կաղապար, գավազան) | 13 | 117.50 | 2,369.00 |
| Բերձորի ԱԳԱՊԵ կենտրոն | Պահեստի համար անհրաժեշտ իրեր (պտուտակահանի հավաքածու, ճանճասպանիկ, ծանրության կրիչ, փայտ կտրելու տակդիր՝ քառոտնուկ) | 7 | 82.60 | 991.70 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 896 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 01.1/14-2/18889-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 06/3-8/41648-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Համագործակցային աշխատանքներ նախատեսվում են՝ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի, ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ» Հայաստանի մասնաճյուղի միջև: |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Ծրագրի ավարտից հետո «Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ» Հայաստանի մասնաճյուղը վերջնական հաշվետվություն կներկայացնի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 912 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/14-2/18977-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 06/3-8/42494-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, ծիսական մոմի արտադրության համար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (22,460 կգ ընդհանուր քաշով, 32,567 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 913 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 01.1/14-2/18907-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի N 06/3-8/42687-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված պրոյեկտորները (2 տեղ, 339 կգ ընդհանուր քաշով, 14,462 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 273,573 դրամ, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի Մ-593-Ա, օգոստոսի 30-ի N Մ-709-Ա և հոկտեմբերի 11-ի N Մ-877-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳ[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 914 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 01.1/14-2/18811-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/41580-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագաս Ինվեստ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01834959) 2017 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված՝ N 09/10/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում և ապրանքների մատակարարում՝ 103,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմի[illegible]

ՆԱԽԱԳ[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 915 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 01.1/14-2/18903-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 06/3-8/41782-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի N Մ-593-Ա, օգոստոսի 30-ի N Մ-709-Ա և հոկտեմբերի 11-ի որոշումների Մ-877-Ա խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդի Կարասի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239413) 2017 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում կահույքի պատրաստում և մատակարարում՝ 11,105,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 916 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հոկտեմբերի 20-ին)
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 23-ի N 01.1/14-2/19142-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/42421-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա որոշմամբ (2017 թվականի հունվարի 27-ի Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՔԱՐԴ Ագրոսերվիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555961) 2017 թվականի սեպտեմբերի 25-ին կնքված՝ DLS-10-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սարքավորումների տեղակայման, կարգաբերման և շահագործման պայմանների ու կանոնների հետ կապված աշխատակազմին խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ 1,230,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 917 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 01.1/14-2/18815-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/41370-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա որոշմամբ (2017 թվականի հունվարի 27-ի Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՔԱՐԴ Ագրոսերվիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555961) 2017 թվականի օգոստոսի 17-ին կնքված՝ DL-08-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կովի քերիչի ձեռքբերում՝ 3,206,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էկովիլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00465627) 2017 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անասնաֆերմայի ուսումնական կենտրոնի համար, որպես ուսումնական նմուշ առևային ջրատաքացուցիչի ձեռքբերում՝ 430,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 918 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N Մ-827-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/18704-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/42363-17 եզրակացությունները, ինչպես նաև, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի, N 401 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-827-Ա որոշման 1-ին կետում «54,185.62 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը,» բառերը փոխարինել «54,185.62 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 19,500 ԱՄՆ-ի դոլար» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 919 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N Մ-830-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/18712-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 17-ի N 06/3-8/42156-17 եզրակացությունները, ինչպես նաև, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի, N 402 գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հացցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 3)» N Մ-830-Ա որոշման 1-ին կետում «91,710.89 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը,» բառերը փոխարինել «91,710.89 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 29,250 ԱՄՆ-ի դոլար» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

13/6.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 920 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆ» ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 6-ի N 01.1/14-2/18126-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 9-ի N ԱԳ/ԱնՄ-2-1/10369-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 9-ի N 06/3-8/40580-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Պատիվ» հիմնադրամի կողմից «Հայկական Լեգեոն» կամավորական հայրենասիրական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (1,600 կգ ընդհանուր քաշով, 800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 500 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՄՎ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Հայկական Լեգեոն» կամավորականների հայրենասիրական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի [illegible] աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն [illegible] կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Բեռի և բաշխման ցանկ

| N | Ապրանքի Անվանումը | Բեռը հանձնվելու է | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԱՄՆ դոլար | Ծագման երկիր |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հաշմանդամի սայլակ /էլեկտր./ | «Սուրբ Մարիամ» բժշկական կենտրոնին | 1 հատ | 55 | 55 | 200.00 | ԱՄՆ |
| 2. | Հաշմանդամի սայլակ | «Սուրբ Մարիամ» բժշկական կենտրոնին | 2 հատ | 15 | 15 | 50.00 | ԱՄՆ |
| 3. | Հագուստ /օգտ./ մեծահասակների | Կազմակերպության շահառուներին | 75 արկղ | 1523 | 1223 | 535.00 | ԱՄՆ |
| 4. | Հաշմանդամի հենակ / 1 կոմպլ./ | Կազմակերպության շահառուներին | 2 հատ | 7 | 7 | 15.00 | ԱՄՆ |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 80 | 1600 | 1300 | 800.00 | |

Նախագահ                    Ա. Կարապետյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 921 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱ-ԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ՆԱՏՕ-ի կողմից ձեռք բերված, որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի (պրոֆիլոմետր (թաղանթի հաստության չափման սարքավորում)՝ 2 տեղ, 92 կգ ընդհանուր քաշով, 45,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 7,130.10 (HKD) հոնկոնգյան դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 922 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԿՈՄԻՏԵ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ագիտոս հիմնադրամի ֆինանսավորմամբ ձեռք բերված՝ «Հայաստանի Ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպության հասցեով ստացված հաշմանդամների համար նախատեսված հոկեյի սահնակների, մականների և դրանց պահեստամասերի (93.80 կգ ընդհանուր քաշով, 9,620.20 կանադական դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,600 կանադական դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի Ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 923 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N Մ-633-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Հույսի կամուրջ»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 01.1/14-2/17868-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 4-ի N 06/3-8/39717-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01212788) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի հուլիսի 11-ի «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող և սոցիալական դժվարին իրավիճակում ապրող երեխաների սոցիալական աջակցություն» ծրագրի մասին» N Մ-633-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի քաղ. Երևան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 1,400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ Դիլիջան քաղաքում գտնվող «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2009 թվականի հուլիսի 28-ին կնքված N 000207 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 222,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի քաղ. Իջևան «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի օգոստոսի 20-ին կնքված N 015539 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 300,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի քաղ. Բերդ «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2015 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված N200570 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 260,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի քաղ. Նոյեմբերյան «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի փետրվարի 21-ին կնքված N 000162 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 144,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հայռուսգազարդի» («Գազպրոմ Արմենիա») ՓԲԸ-ի Տավուշի ԳԳՄ-ի հետ Դիլիջանի (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը գազամատակարարման աշխատանքների իրականացում՝ 1,400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Հայռուսգազարդի» («Գազպրոմ Արմենիա») ՊՓԲԸ-ի Տավուշի ԳԳՄ-ի հետ Իջևանի (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի նոյեմբերի 8-ին կնքված N 09108137447 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը գազամատակարարման աշխատանքների իրականացում՝ 1,300,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Տավուշի ԳԳՄ-ի հետ Բերդի (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված N 094081410001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը գազամատակարարման աշխատանքների իրականացում՝ 1,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կո[illegible]

ՆԱԽԱ[illegible] Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 հոկտեմբեր 2017 թվականի N Մ - 924 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 3-ի N01.1/14-2/17860-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 3-ի N 06/3-8/39410-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01528652) 2017 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 071/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևան քաղաքի, Առնո Բաբաջանյան 42/7 հասցեում գտնվող ֆուտբոլի դաշտի և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների որակի հսկման և լաբորատոր փորձարկումների աշխատանքների կատարում՝ 1,880,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 925 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 01.1/14-2/18532-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N06/3-8/41814-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ՉԺՀ-ից՝ SHANGHAI ZHISHUN INDUSTRY AND COMMERS co LTD-ից , Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված և ներմուծված օդորակիչի ֆիլտրերը (12 տեղ, 216 հատ, 200 կգ ընդհանուր քաշով, 741 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 206,400 հայկական դրամ, Արարատյան (ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 926 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-044-Ա ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 01.1/14-2/18005-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 6-ի N 06/3-8/40174-17 եզրակացությունները, *ո ր ո շ ու մ է*.

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արգավանդ կահույք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01261634) 2017 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված՝ N Գ-20/2017 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային աթոռների ձեռքբերում՝ 400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-927-Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄՆ-Ի «ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի 2017 թվականի հոկտեմբերի 4-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 01.1/14-2/18253-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 12 -ի N 02/14/18179-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 06/3-8/40755-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է*** .

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2067 թվականի հոկտեմբերի 1-ը (50 տարի) ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 100,178,628 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին, որպես երկրորդ ուսանողական հանրակացարան օգտագործելու նպատակով անշարժ գույքի անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 01511187) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի հետ (300 Լեյքսայդ Դրայվ, 12-րդ հարկ, Օքլենդ, Կալիֆորնիա 94612) 2017 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ուսանողների համար, որպես հանրակացարան օգտագործելու նպատակով Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Կենտրոն Ձորագյուղ ազգագրական թաղամաս 4 շինություն հասցեում գտնվող անշարժ



գույքի անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնում՝ 100,178,628 դրամ կադաստրային արժեքով:

3. «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետարանին:

[illegible] Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ» կազմակերպության

Փոխնախագահ Աշոտ Ղազարյանի կողմից

«4» հոկտեմբերի, 2017թ.

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՈՐՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի հիմնական նպատակն է «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի (ՀԱՀՀ) ուսանողներին ուսանելու ընթացքում ապահովել հանրակացարանային տարածքով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիան (ՀԱՀԿ), ԱՄՆ-ում գրանցված ոչ առևտրային, շահույթ չհետապնդող կազմակերպությունը, որը հանդիսանում է Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադիրներից մեկը:<br>Հասցե՝ 300 Լեյքսայդ Դրայվ, 12-րդ հարկ, Օքլենդ, Կալիֆորնիա 94612, ԱՄՆ: |
| 4. | Ծրագրի կատարողը | Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիա (ՀԱՀԿ):<br>Հասցե՝ 300 Լեյքսայդ Դրայվ, 12-րդ հարկ, Օքլենդ, Կալիֆորնիա 94612, ԱՄՆ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայրը՝ ՀՀ, Երևան, Կենտրոն, Զորագյուղ ազգագրական թաղամաս հասցեում տեղակայված թիվ 4 շինությունն ամբողջությամբ (Օբյեկտ): Օբյեկտը բաղկացած է անավարտ շենքից, որի մակերեսը կազմում է 554.7 (հինգ հարյուր հիսունչորս ամբողջ յոթ) քառակուսի մետր: Բնագավառը՝ Կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն համապատասխանում է ՀՀ, Երևան, Կենտրոն, Զորագյուղ ազգագրական թաղամաս հասցեում տեղակայված թիվ 4 շինության կադաստրային արժեքին: Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 08/10/2017թ.-ին տրված թիվ ՍՏ-29/09/2017-2-0301 տեղեկանքի անշարժ գույքի կադաստրային արժեքը կազմում է՝ 100,178,628 (հարյուր միլիոն հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀԱՀՀ-ի և համալսարանի ուսումնական ծրագրերում որպես մասնակից ներգրավված ուսանողները:<br>ՀՀ, Երևան, Կենտրոն, Զորագյուղ ազգագրական թաղամաս հասցեում տեղակայված թիվ 4 շինությունն ամբողջությամբ. ժամանակավոր, անհատույց հիմքերով հանձնվել է ՀԱՀՀ-ին, սակայն շենքի շինարարությունը ավարտելու, հանրակացարանի վերափոխելու և վերանորոգելու ծախսերը կատարվելու են ՀԱՀՀ-ի կողմից: ՀԱՀՀ-ն իրականացնելու է նաև հանրակացարանի շահագործման, սպասարկման և պահպանման ծախսերը, որոնք չեն ազատվելու ԱԱՀ-ից:<br>ՀԱՀ-ի ուսանողները վճարելու են հանրակացարանում մնալու համար, սակայն այդ գումարը կազմելու է հանրակացարանի համար կատարված ծախսերի միայն հիսուն տոկոսը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի իրականացման տևողությունն է 50 (հիսուն) տարի՝ 20/10/2017թ.-ից մինչև 20/10/2067թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀԱՀԿ-ի և ՀԱՀՀ-ի միջև 2017թ. սեպտեմբերի 4-ին կնքված պայմանագրի համաձայն ՀԱՀԿ-ն իրեն պատկանող ՀՀ, Երևան, Կենտրոն, Զորագյուղ ազգագրական թաղամաս հասցեում տեղակայված թիվ 4 շինությունն ամբողջությամբ հանձնել է ՀԱՀՀ-ի ժամանակավոր, անհատույց օգտագործման: Պայմանագրի պատճենը կցվում է:<br>Անշարժ գույքը օգտագործվելու է որպես ուսանողական հանրակացարան: Անշարժ գույքի ժամանակավոր, անհատույց օգտագործման հանձնումն իրականացվելու է 50 (հիսուն) տարի ժամկետով:<br>Նշված անշարժ գույքի շահագործման հետ կապված ծախսերն իրականացվելու են ՀԱՀՀ-ի կողմից: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀԱՀԿ-ի կողմից ՀԱՀՀ-ին ժամանակավոր, անհատույց օգտագործման է հանձնել ՀՀ, Երևան, Կենտրոն, Զորագյուղ ազգագրական թաղամաս հասցեում տեղակայված թիվ 4 շինությունը:<br>Ծրագրի շրջանակներում ապրանքների ձեռքբերում և ներմուծում, ինչպես նաև ծառայությունների մատուցում չի նախատեսվում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության Մարդասիրական ծրագրերը համակարգող հանձնաժողով, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն: |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Որպես ուսանողական հանրակացարան օգտագործվող շենքի նկատմամբ օգտագործման օրվանից իրականացվելու է սահմանված նպատակների կատարման հսկողություն՝ ՀԱՀՀ-ի Հոգաբարձուների խորհրդի, ակադեմիական և վարչական ղեկավարման մարմինների կողմից։ |

13/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 928 -Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄՆ-Ի «ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ «ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԵՆՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի 2017 թվականի հոկտեմբերի 4-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 01.1/14-2/18252-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 02/14/18178-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 06/3-8/40756-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է***.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2067 թվականի հոկտեմբերի 1-ը (50 տարի) ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 199,986,012 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին «Կրթական և գիտահետազոտական ծրագրերի կենտրոն» հիմնադրելու նպատակով շենքի անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 01511187) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի հետ (300 Լեյքսայդ Դրայվ, 12-րդ հարկ, Օքլենդ, Կալիֆորնիա 94612) 2017 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին «Կրթական և գիտահետազոտական ծրագրերի կենտրոն» հիմնադրելու նպատակով Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Կենտրոն Զորավար



ազգագրա-կան թաղամաս 11 հասցեում գտնվող անավարտ շենքի անհատույց ժամանակավոր օգտա-գործման հանձնում՝ 199,986,012 դրամ կադաստրային արժեքով:

3. «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ» կազմակերպության

Փոխնախագահ Աշոտ Ղազարյանի կողմից

«4» հոկտեմբերի, 2017թ.

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ «ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԵՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի հիմնական նպատակն է «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի (ՀԱՀՀ) կողմից «Կրթական և գիտահետազոտական ծրագրերի կենտրոն» հիմնադրելու նպատակով շենքային պայմանների բարելավումը, որի արդյունքում անհրաժեշտ պայմաններ կապահովվեն ՀԱՀՀ-ի ընդլայնված կրթական և գիտահետազոտական ծրագրերի իրականացման համար: Մասնավորապես նախատեսվում է շենքում տեղակայել համալսարանի «Բնապահպանական և բնաօգտագործման հետազոտական կենտրոն»-ը, որը իրականացնում է զանազան ծրագրեր, ինչպես նաև նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված անգլերեն լեզվի կենտրոնը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնությունից: |
| 3. | Բարեգործը | Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիան (ՀԱՀԿ), ԱՄՆ-ում գրանցված ոչ առևտրային, շահույթ չհետապնդող կազմակերպությունը, որը հանդիսանում է Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադիրներից մեկը:<br>Հասցե՝ 300 Լեյքսայդ Դրայվ, 12-րդ հարկ, Օքլենդ, Կալիֆորնիա 94612, ԱՄՆ: |
| 4. | Ծրագրի կատարողը | Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիա(ՀԱՀԿ):<br>Հասցե՝ 300 Լեյքսայդ Դրայվ, 12-րդ հարկ, Օքլենդ, Կալիֆորնիա 94612, ԱՄՆ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ք. Երևան, [illegible] Զորագյուղ ազգագրական թաղամաս հասցեում տեղակայված թիվ 11 անշարժ գույքի [illegible] (Օբյեկտը)՝ 1003.9 (հազար երեք ամբողջ ինը) [illegible] Բնագավառ՝ Կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն համապատասխանում է ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Զորագյուղ ազգագրական թաղամաս հասցեում տեղակայված թիվ 11 անավարտ շենքի կադաստրային արժեքին: Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 03/10/2017թ.-ին տրված թիվ ԱՏ-29/09/2017-2-0302 տեղեկանքի անշարժ գույքի կադաստրային արժեքը կազմում է 199,986,012 (հարյուր իննսունինը միլիոն ինը հարյուր ութսունվեց հազար տասներկու) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀԱՀՀ-ն և համալսարանի ուսումնական ծրագրերում որպես մասնակից ներգրավված ներկա և գալիք ուսանողներն ու շրջանավարտները, գիտական աշխատողները և դասախոսական կազմը, Հայաստանի կրթական համակարգը, տարածաշրջանի բնակչությունը:<br>ՀԱՀԿ-ն ՀԱՀՀ-ին շենքը հանձնել է ժամանակավոր, անհատույց օգտագործման, սակայն շենքի շինարարությունը ավարտին հասցնելու, շահագործման և պահպանման ծախսերը պետք է կատարվեն ՀԱՀՀ-ի կողմից ու չեն ներկայացվում սույն ծրագրի շրջանակներում ազատվելու ԱԱՀ-ի վճարումներից: Իրականացվող բնապահպանական ծրագրերը իրականացվելու են շնորհների և նվիրատվությունների միջոցների հաշվին: Կրթական ծրագրերի համար հնարավոր են մասնակի վճարումներ, որը միայն մասնակիորեն կփոխհատուցի համալսարանի ծախսերը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի իրականացման տևողությունն է 50 (հիսուն) տարի՝ 20/10/2017թ.-ից մինչև 20/10/2067թ. : |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀԱՀԿ-ի և ՀԱՀՀ-ի միջև 2017թ. սեպտեմբերի 4-ին կնքված պայմանագրի համաձայն ՀԱՀԿ-ն իրեն պատկանող և ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Զորագյուղ ազգագրական թաղամաս հասցեում տեղակայված թիվ 11 անավարտ շենքը հանձնել է ՀԱՀՀ-ի ժամանակավոր, անհատույց օգտագործման: Պայմանագրի պատճենը կցվում է:<br>Անշարժ գույքի ժամանակավոր, անհատույց օգտագործման հանձնումն իրականացվելու է 50 (հիսուն) տարի ժամկետով:<br>Նշված շենքի շահագործման հետ կապված ծախսերն իրականացվելու են ՀԱՀՀ-ի կողմից: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀԱՀԿ-ի կողմից ՀԱՀՀ-ին ժամանակավոր, անհատույց օգտագործման է հանձնվել ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Զորագյուղ ազգագրական թաղամաս հասցեում տեղակայված թիվ 11 շենքը:<br>Ծրագրի շրջանակներում ապրանքների ձեռքբերում և ներմուծում, ինչպես նաև ծառայությունների մատուցում չի նախատեսվում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության Մարդասիրական ծրագրերը համակարգող հանձնաժողով, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Շենքի շահագործման օրվանից իրականացվելու է սահմանված նպատակների նկատմամբ հսկողություն՝ ՀԱՀՀ-ի Հոգաբարձուների խորհրդի, ակադեմիական և վարչական ղեկավարման մարմինների կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 929 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅՈՒՄ ԻՆՏԵԳՐՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ 10 ՈՒ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 20-ի N 01.1/14-2/19014 -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 02/14/17881-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 9-ի N 03/07-1/13596-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 9-ի N 01/15.1/6439-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի N C4D3-CA6B-5916 ու Երևանի քաղաքապետի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 02/12-63423-ի եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Առաջին Եկմալյան 6, ՀՎՀՀ՝ 01559706) 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը իրականացվող՝ 88,754,702 դրամ ընդհանուր արժեքով, «Տեխնոլոգիա» առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթության և 10 ու 11-րդ դասարանների «Ձեռնարկատիրություն» առարկաների փորձնական ծրագրերի իրականացում» բարեգործական կրթական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի սեպտեմբերի 2-ին կնքված՝ N 008/117575807 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Սյունիքի մարզային գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 90,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2011 թվականի մայիսի 18-ին կնքված N 145521 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 720,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2014 թվականի օգոստոսի 20-ին կնքված N 7053347 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվա-



կանի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Երևանի գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 90,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2011 թվականի մայիսի 27-ին կնքված N 147599 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Արարատի մարզային գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 90,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2011 թվականի մայիսի 30-ին կնքված N 147861 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզային գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 90,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2011 թվականի հունիսի 16-ին կնքված N 151751 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Վայոց ձորի մարզային գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 90,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի (ՅՈՒՔՈՄ) հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2013 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված՝ N 2547587 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Տավուշի մարզային գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 50,004 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի (ՅՈՒՔՈՄ) հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2012 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված N 2218982 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Կոտայքի մարզային գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 80,004 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի (ՅՈՒՔՈՄ) հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2015 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված N 3204374 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակա հատվածում Արմավիրի և Արագածոտնի մարզային գրասենյակների «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 80,004 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի (ՅՈՒՔՈՄ) հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված N 2705931 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 3-ը ընկած ժամանակահատվածում Լոռու մարզային գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 60,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջաններում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատում եմ
“Հայաստանի պատանեկան նվաճումներ” հասարակական կազմակերպության
տնօրեն Արմենուհի Հովհաննիսյան

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

### <<ՏԵԽՆՈԼՈԳԻԱ>> ԱՌԱՐԿԱՅՈՒՄ ԻՆՏԵԳՐՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ <<ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ>> /10-ՐԴ, 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ/ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2017-2018 թ.

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության գերակա խնդիրների 148-րդ կետի Իրականացնել.<br>1) Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրմամբ՝ <<Տեխնոլոգիա>> առարկայի փորձնական ծրագիրը 2017-2018 ուսումնական տարվա համար՝ հանրապետության բոլոր դպրոցների մեկական 2-րդ և 3-րդ փորձարկվող դասարաններում:<br>2) <<Ձեռնարկատիրություն>> առարկայի փորձնական ծրագիրը 2017-2018 ուսումնական տարվա համար՝ հանրապետության 227 փորձարկվող դպրոցների 10-րդ դասարաններում և 21 փորձարկվող դպրոցների 11-րդ դասարաններում՝ համապատասխան ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված ցուցակի :<br>3) Հաջորդ տարվա համար նախատեսված՝ 4-րդ դասարանի Տեխնոլոգիա առարկայի փորձնական ձեռնարկի ստեղծումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը: |
| 3 | Բարեգործ(ներ)ը | “Պատանեկան նվաճումներ միջազգային կազմակերպություն” ՀԿ<br>JA Worldwide<br>177 Milk Street, Suite 100<br>Boston, MA 02109<br>+617 315 8563<br><br>www.jaworldwide.org<br>jaww@ja.org |

| | | |
|---|---|---|
| 4 | Ծրագրի կատարողը | «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 01559706<br>Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Նորք- Մարաշ, 15 փողոց, 50 տուն<br>Գործունեության վայր՝ ք. Երևան, Առաջին Եկմալյան 6 /"Օրրան" կազմակերպության շենք/<br>Հեռ.՝ 53-51-67<br>Ծրագրին մասնակցում են նաև բիզնես ոլորտի կամավորները |
| 5 | Ծրագրի իրականացման վայր(եր)ը, բնագավառը | Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի և Երևան քաղաքի դպրոցները<br>Հանրակրթության բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն՝ 88754702 (ութսունութ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր երկու) ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | • Հանրապետության 1257 դպրոցների՝ Տեխնոլոգիա առարկայի փորձարկման ծրագրի մեջ ներգրավված՝ 2-րդ և 3-րդ դասարանների շուրջ 50 280 աշակերտները և 1359 ուսուցիչները:<br>• Հանրապետության 227 ավագ և միջնակարգ դպրոցների 227 ուսուցիչները և շուրջ 4540 աշակերտները:<br>• Հանրապետության 21 ավագ և միջնակարգ դպրոցների 21 ուսուցիչները և շուրջ 420 աշակերտները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 1-ը հոկտեմբերի, 2017 թվ.<br>Ծրագրի ավարտը՝ 30-ը սեպտեմբերի, 2018 թվ. |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Կազմակերպության կողմից մշակված դասագրքերը, ուսումնական և մեթոդական ձեռնարկները երաշխավորված են ՀՀ ԿԳ նախարարության կողմից և տպագրվելու են կազմակերպության միջոցներով: Հայաստանի պատանեկան նվաճումներ կազմակերպությունը անդամակցում է "Միջազգային պատանեկան նվաճումներ" կազմակերպությանը: Կազմակերպությունն ունի 10 մարզային գրասենյակներ:<br>Կազմակերպությունն ունի ավտոմեքենա՝ գրասենյակի տնօրինության կողմից մարզային և դպրոցական այցելություններն իրականացնելու համար:<br>"Հայաստանի պատանեկան նվաճումներ " կազմակերպության "Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթության ծրագրի" իրականացման համար նախատեսված հիմնական |

| | | |
|---|---|---|
| | | միջոցառումներն են՝<br>*Փուլ 1-ին, 1-ից 30 –ը հոկտեմբերի, 2017*<br>• Ուսուցիչների վերապատրաստման մոդուլների, ուսուցչի փորձնական ձեռնարկի նախնական տարբերակի տպագրում 2-րդ, 3-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների համար, արժեքը՝ 2 020 000 ՀՀ դրամ:<br>• 2-րդ, 3-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների ուսուցիչների վերապատրաստման դասընթացների իրականացման համար տրանսպորտային ծախսեր, արժեքը՝ 3,900,240 ՀՀ դրամ,<br>• գրենական պիտույքներ, արժեքը՝ 300 000 ՀՀ դրամ:<br>• Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, գործարար այցելություններ)՝ 2,477,788 ՀՀ դրամ:<br>• Ծրագրային հավելյալ ծախսեր (հարցաշարերի, թեստերի բազմացում, լուսանկարների տպում )՝ 73,387 ՀՀ դրամ<br>Ընդհանուր գումարը՝ 8 771 415 ՀՀ դրամ<br><br>*Փուլ 2-րդ, 1-ը նոյեմբերի – 30 -ը դեկտեմբերի, 2017*<br>• Փորձարկման արդյունքների հիման վրա հիմնական և վերամշակված ձեռնարկի տպագրումը, արժեքը՝ 6 000 000 ՀՀ դրամ:<br>• Վերապատրաստված ուսուցիչների վկայագրերի տպագրում, արժեքը՝ 400 000 ՀՀ դրամ:<br>• Տրանսպորտային ծախսեր(այցելություն դպրոցներ՝ փորձարկվող ծրագրերը դիտարկելու, դասագրքերը բաշխելու նպատակով), արժեքը՝ 1,097,055 ՀՀ դրամ:<br>• 4-րդ դասարանի Տեխնոլոգիա առարկայի ձեռնարկի ստեղծման աշխատանքային խմբի ստեղծում, և այդ նպատակով համակարգիչի ձեռքբերում, արժեքը՝ 500 000 ՀՀ դրամ:<br>• Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, |

գործարար այցելություններ)՝ 4,955,576 ՀՀ դրամ
- Գրենական պիտույքներ դիտարկումների համար, արժեքը՝ 100 000 ՀՀ դրամ:
- Ծրագրային հավելյալ ծախսեր (հարցաշարերի բազմացում և ընդմիջումների կազմակերպում)՝ 25 620 ՀՀ դրամ

Ընդհանուր գումարը՝ 13 078 251 ՀՀ դրամ:

*Փուլ 3-րդ, 1-ից 31-ը հունվարի, 2018*
- Տրանսպորտային ծախսեր(այցելություն դպրոցներ՝ փորձարկվող ծրագրերը դիտարկելու, նպատակով), արժեքը՝ 522,000 ՀՀ դրամ:
- Գերնական պիտույքներ, արժեքը՝ 10 000 ՀՀ դրամ:
- Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, գործարար այցելություններ)՝ 2,477,788 ՀՀ դրամ
- Ծրագրային հավելյալ ծախսեր (բիզնես պլանների մրցույթի ձևաթղթերի բազմացում)՝ 40,049 դր

Ընդհանուր գումարը՝ 3 049 837 ՀՀ դրամ

*Փուլ 4-րդ, 1-ը փետրվարի – 31 –ը մարտի, 2018*
- Տրանսպորտային ծախսեր(այցելություն դպրոցներ՝ փորձարկվող ծրագրերը դիտարկելու, նպատակով), արժեքը՝ 1,055,876 ՀՀ դրամ:
- Գրենական պիտույքներ, արժեքը՝ 10 000 ՀՀ դրամ:
- Շնորհանդեսի կազմակերպում Հայաստանի Ամերիկյան Համալսարանում (սրահի վարձակալություն, լսարանի և սարքավորումների սպասարկում), արժեքը՝ 350 000 ՀՀ դրամ:
- Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, գործարար այցելություններ)՝ 4,955,576 ՀՀ դրամ

Ընդհանուր գումարը՝ 6 371 452 ՀՀ դրամ

*Փուլ 5-րդ, 1-ից 30-ը ապրիլի, 2018*
- Տրանսպորտային ծախսեր (այցելություն դպրոցներ՝ փորձարկվող ծրագրերը դիտարկելու, նպատակով, աշակերտական գործարար ընկերությունների տոնավաճառի կազմակերպում), արժեքը՝ 1 962 000 ՀՀ դրամ:
- Տոնավաճառի կազմակերպման համար ծախսեր (տաղավարների գնում, սեղան- աթոռների վարձակալություն և փոխադրում, հյուրանոցի վարձակալում հեռավոր շրջաններից ժամանող աշակերտների համար և այլն), արժեքը՝ 835 722 ՀՀ դրամ:
- Գրենական պիտույքներ, արժեքը՝ 70 000 ՀՀ դրամ:
- Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, գործարար այցելություններ)՝ 2,477,788 ՀՀ դրամ

Ընդհանուր գումարը՝ 5, 345 510 ՀՀ դրամ

*Փուլ 6-րդ, 1-ից - 31 –ը մայիս ի, 2018*
- Տրանսպորտային ծախսեր (այցելություն դպրոցներ՝ փորձարկվող ծրագրերը դիտարկելու, նպատակով, ամառային ճամբարին մասնակցող 50 լավագույն աշակերտների ընտրության համար քննությունների կազմակերպում), արժեքը՝ 1 522 000 ՀՀ դրամ:
- Գրենական պիտույքներ, արժեքը՝ 15 000 ՀՀ դրամ:
- Ծրագրային հավելյալ ծախսեր (ճամբարի քննության և ծրագրի գնահատման թեստերի բազմացում) , արժեքը՝ 121,680 ՀՀ դրամ:
- Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, գործարար այցելություններ)՝ 2,477,788 ՀՀ դրամ

Ընդհանուր գումարը՝ 4 136 468 ՀՀ դրամ

*Փուլ 7-րդ, 1-ից – 30 – ը հունիսի, 2018*
- Տրանսպորտային ծախսեր (այցելություն 4-րդ դասարանում Տեխնոլոգիա առարկան

պարապող ուսուցիչների հավաքագրման նպատակով, Ճամբարին մասնակցող աշակերտների ծնողական ժողովների կազմակերպում, արժեքը՝ 327,840 ՀՀ դրամ:

- 4-րդ դասարանի փորձնական ձեռնարկի տպագրություն, արժեքը՝ 773 243 ՀՀ դրամ:
- Գրենական պիտույքներ, արժեքը՝ 20 000 ՀՀ դրամ:
- Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, գործարար այցելություններ)՝ 2,477,788 ՀՀ դրամ

Ընդհանուր գումարը՝ 3 598 871 ՀՀ դրամ

*Փուլ 8-րդ, 1-ից -31 –ը հուլիսի, 2018*

- Տրանսպորտային ծախսեր (Ճամբարի մասնակիցների փոխադրում դեպի Ծաղկաձոր և հակառակ ուղղություններով), արժեքը՝ 3 780 860 ՀՀ դրամ:
- Հյուրանոցի վարձակալություն ճամբարի համար, արժեքը՝ 6 000 000 ՀՀ դրամ
- Գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների, դեղորայքի զնում ճամբարի համար, արժեքը՝ 300 000 ՀՀ դրամ:
- Ճամբարի մասնակիցների վկայականների տպում, արժեքը՝ 70 000 ՀՀ դրամ:
- Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, գործարար այցելություններ)՝ 2,477,788 ՀՀ դրամ

Ընդհանուր գումարը՝ 12 628 648 ՀՀ դրամ

*Փուլ 9-րդ, 1-ից – 31-ը օգոստոսի, 2018*

- Տրանսպորտային ծախսեր (վերապատրաստման դասընթացների կազմակերպում ՀՀ բոլոր դպրոցների 4-րդ դասարանի Տեխնոլոգիային ուսուցիչների համար ձեռնարկատիրական կրթության ինտեգրման նպատակով) արժեքը՝ 8 000 000 ՀՀ դրամ:
- Գրենական պիտույքներ [illegible]ման համար, արժեքը՝ 150 000 ՀՀ դրամ:
- Վերապատրաստված ուսուցիչների վկայականների տպագրում, արժեքը՝ 400 000 ՀՀ դրամ:
- Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, գործարար այցելություններ)՝ 2,506,277 ՀՀ դրամ

Ընդհանուր գումարը՝ 11 056 277 ՀՀ դրամ

*Փուլ 10-րդ, 1-ից – 30-ը սեպտեմբերի, 2018*

- Տրանսպորտային ծախսեր (այցելություն դպրոցներ) 418 160 ՀՀ դրամ:
- Դիտարկումների հիման վրա 4-րդ դասարանի Տեխնոլոգիա առարկայի հիմնական ձեռնարկի տպագրություն, արժեքը՝ 1 000 000 ՀՀ դրամ:
- Գրենական պիտույքներ, արժեքը՝ 20 000 ՀՀ դրամ:
- Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, կազմակերպում են գործնական պարապմունքներ, մրցույթներ, գործարար այցելություններ)՝ 2,477,788 ՀՀ դրամ:

Ընդհանուր գումարը՝ 3, 915, 948 ՀՀ դրամ:

Ընդամենը՝ - 71,952, 677 (յոթանասունմեկ միլիոն ինը հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր յոթանասունյոթ) դրամ:

Ծրագրի կազմակերպչական ծախսեր-16,802,025 (տասնվեց միլիոն ութ հարյուր երկու հազար քսանհինգ) դրամ

Ընդհանուր ծրագրի բյուջեն- 88,754,702 (ութսունութ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր երկու) ՀՀ դրամ

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայություն-ների և աշխատանք-ների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | 1. Ինտերնետի մատակարարում Սյունիքի մարզի գրասենյակի համար, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝ 90 000 ՀՀ դրամ:<br>2. Հեռախոսային կապի մատակարարումգումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝720 000 ՀՀ դրամ:<br>3. Ինտերնետի մատակարարում Երևանի գրասենյակի համար, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝90 000 ՀՀ դրամ:<br>4. Ինտերնետի մատակարարում Արարատի մարզի գրասենյակի համար, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝90 000 ՀՀ դրամ:<br>5. Ինտերնետի մատակարարում Գեղարքունիքի մարզի գրասենյակի համար, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝90 000 ՀՀ դրամ:<br>6. Ինտերնետի մատակարարում Վայոց ձորի մարզի գրասենյակի համար, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝90 000 ՀՀ դրամ: |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայություն-ների և աշխատանք-ների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | 7. Ինտերնետի մատակարարում Տավուշի մարզի գրասենյակի համար, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝50 004 ՀՀ դրամ:<br>8. Ինտերնետի մատակարարում Կոտայքի մարզի գրասենյակի համար, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝80 004 ՀՀ դրամ:<br>9. Ինտերնետի մատակարարում Արմավիրի և Արագածոտնի մարզերի գրասենյակի համար, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝80 004 դրամ:<br>10. Ինտերնետի մատակարարում Լոռու մարզի գրասենյակի համար, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝60 000 դրամ:<br>11. Տարեկան ֆինանսական աուդիտի իրականացում, գումարը՝ առանց ԱԱՀ՝ 1 500 000 ՀՀ դրամ:<br>12. Կազմակերպության մարզային այցելությունների համար բենզինի ձեռքբերում, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ 1 200 000 ՀՀ դրամ:<br>13. Ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ 200 000 ՀՀ դրամ:<br>14. Ճանապարհածախս (ուսուցիչների վերապատրաստում, ճամբարի փոխադրումներ, մարզային համակարգողների գործուղումներ), գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ 21 386 031 ՀՀ դրամ:<br>15. Դասագրքերի, ուսումնական ձեռնարկների տպագրություն (Տիգրան Մեծ հրատարակչություն), գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ 9 793 243 ՀՀ դրամ:<br>16. Գրենական պիտույքների ձեռքբերում, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ 995 000 ՀՀ դրամ:<br>17. Համակարգիչների ձեռքբերում, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ 500 000 ՀՀ դրամ:<br>18. Լսարանի և սարքավորումների սպասարկում (ՀՄՀ), գումարը՝տարեկան առանց ԱԱՀ 350 000 ՀՀ դրամ:<br>19. Հյուրանոցային ծառայություն հեռավոր շրջաններից Երևան ժամանող մասնակիցների համար, գումարը՝տարեկան առանց ԱԱՀ 100 000 ՀՀ դրամ:<br>20. Դեղորայքի ձեռքբերում ամառային ճամբարի մասնակիցների համար, գումարը՝ առանց ԱԱՀ 100 000 ՀՀ դրամ:<br>21. Ամառային ճամբարը կազմակերպելու նպատակով տնտեսական պարագաների, գրենական պիտույքների ձեռքբերում, գումարը՝ առանց ԱԱՀ 200 000 ՀՀ դրամ:<br>22. Ծրագրի մասնակցության վկայականների և հարցաշարերի տպագրում, գումարը՝տարեկան առանց ԱԱՀ 1 090 587 ՀՀ դրամ:<br>23. Հյուրանոցի վարձավճար լավագույն աշակերտների համար ամառային ճամբարի կազմակերպելու նպատակով, գումարը՝ տարեկան առանց ԱԱՀ՝ 6 000 000 ՀՀ դրամ:<br>24. Վճարումներ համապատասխան մասնագետներին՝ համաձայն ըստ նրանց հետ կնքված քաղիրավաբանական պայմանագրերի, որոնք ուսուցիչների հետ անմիջականորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը (համատեղ վարում են դասեր, կարդում են դասախոսություններ, [illegible])՝ 29 762 245 ՀՀ |

| | | |
|---|---|---|
| | | Ընդամենը՝ 74 617 118 (յոթանասունչորս միլիոն վեց հարյուր տասնյոթ հարյուր տասնութ) ՀՀ դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր ««Օրանժ Արմենիա» ՓԲԸ» «ԱրմենՏել»-ի, "Ղ-Տելեկոմ" ՓԲԸ ,«Հայաստանի էլեկտրական Ցանցեր», ընկերությունների հետ:<br>• Բենզինի ձեռք բերում- 1,200,000 դրամ<br>• հեռախոս՝ - 720, 000 դրամ<br>• ինտերնետ – 720, 012 դրամ<br>• ֆինանսական աուդիտ- 1,500,000 դրամ<br>• մեքենայի տեխնիկական սպասարկում-200, 000 դրամ<br>• աշխատավարձ ադմինիստրատիվ աշխատողներին (ծրագրի ղեկավար, հաշվապահ)- 12, 462, 013 դրամ<br>Ընդամենը 16 802 025 (տասնվեց միլիոն ութ հարյուր երկու հազար քսանհինգ ) դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ. | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2.ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>3. ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>4. ՀՀ Կենտրոնական բանկ<br>5. Երևանի քաղաքապետարան<br>6. ՀՀ մարզերի մարզպետարաններ<br>7. Տեղական ինքնակառավարման մարմիններ<br>8.Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք ծրագրեր են իրականացնում կրթության ոլորտում<br>9. Գործարար ընկերություններ, ԶԼՄ-ներ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին<br>• ամսական եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ծրագրի ֆինանսավորողին<br>• ամսական հաշվետվություններ ՀՀ ֆինանսների նախարարությանը<br>• ֆինանսական աուդիտի իրականացում |

*Ծրագրի ղեկավար* *Արմենուհի Հովհաննիսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-930-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ ՋԱՀԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 01.1/14-2/18538-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/41075-17 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 02/14/18320-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 4,860,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ջահերի նվիրատվություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԷՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01818989) 2017 թվականի սեպտեմբերի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ջահերի մատակարարում՝ 4,860,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 09/17)
22 սեպտեմբերի 2017թ.

Հոգաբարձուների խորհրդի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

Ծ Ր Ա Գ Ի Ր
« Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ջահերի նվիրատվություն »

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ջահերի նվիրատվություն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հոգևոր բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 4,860,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանություն: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև 2017 թվականի հոկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ջահերի ձեռք բերում՝ 4,860,000 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 2017 թվականի հոկտեմբերի 31-ը: |

13/5

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ԷՄ» ՍՊԸ-ից ջահերի ձեռք բերում՝ 4,860,000 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնտեսական բաժնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-931-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 01.1/14-2/18303-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/40866-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N ՆՁ/22.2/12802-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Direct Relief» միջազգային կազմակերպության կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (4 տեղ, 1,363.5 կգ ընդհանուր քաշով, 535,663.45 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 9,137.46 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

**ՀԱՀ 095**

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Ալթունյան Լ. – ՀՀ առողջապահության նախարարություն | SC 095-01 | 2 | 2,060.00 | 259,823.42 |
| 2 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | SC 095-02 | 1 | 364.00 | 164,368.70 |
| 3 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Ղազարյան Ս.- «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | SC 095-03 | 1 | 581.00 | 46,904.51 |
| 4 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Մինասյան Ա.- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն | SC 095-04 | | | 37,206.13 |
| 5 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Աղաջանովա Ե. – <<Մուրացան>> բժշկական կենտրոն | SC 095-05 | | | 16,670.13 |
| 6 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Տարագճյան Կ.- ՀԲԸՄ Քլոդյա Նազարյան Բժշկական կենտրոն | SC 095-06 | | | 10,690.56 |
| | | | **Ընդամենը** | | **4** | **3005** | **535,663.45** |
| | | | **Փոխադրման ծախսեր** | | | | **9,137.46** |
| | | | **Ընդամենը** | | | | **544,800.91** |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-932-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 01.1/14-2/18580-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/41547-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 1/06/1282-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Միջազգային ծանրամարտի ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (30 տեղ, 655 կգ ընդհանուր քաշով, 630 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ծնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-933-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-714-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 01.1/14-2/18581-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/41526-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Սիսիանի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-714-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) արհեստական խոտածածկի ռետինե գնդիկներ՝ 44 տեղ, 45,040 կգ ընդհանուր քաշով, 7,040 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10,400 եվրո, «Արարատյան» ՄՎ.

2) խաղադաշտի արհեստական խոտածածկ՝ 24 տեղ, 21,820 կգ ընդհանուր քաշով, 77,990.63 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,500 եվրո, «Արարատյան» ՄՎ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-934-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-714-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 01.1/14-2/18582-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/41528-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Սիսիանի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-714-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) արհեստական խոտածածկի ռետինե գնդիկներ՝ 22 տեղ, 22,460 կգ ընդհանուր քաշով, 3,520 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,200 եվրո, «Արարատյան» ՄՎ.

2) խաղադաշտի արհեստական խոտածածկ (տեղադրման նյութերով և պարագաներով), մարզագույք և խոտածածկի մշակման տեխնիկա՝ 120 տեղ, 7,340 կգ ընդհանուր քաշով, 39,009.67 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,500 եվրո, «Արարատյան» ՄՎ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-935-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 01.1/14-2/18510-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/41058-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է**.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված համակարգիչները (6 հատ, 2 տեղ, 109 կգ ընդհանուր քաշով, 13,439 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 380 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա, օգոստոսի 4-ի N Մ-691-Ա, սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-936-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/18663-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/41060-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա, օգոստոսի 4-ի N Մ-691-Ա, սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Լիբանանի Հանրապետության քաղաքացիներ Ջեդ Մելքիի (անձնագիր՝ RL30655 08) և Աբու Ղանեմ Ղաիսի (անձնագիր՝ LR 0196124) հետ 2017 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված՝ N 01-15.09.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Շվեյցարական Համադաշնության քաղաքացի Անահիդ Դավուդյարյանի (անձնագիր՝ X3964531) հետ 2017 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված՝ N 01-06.09.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-937-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/18677-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/41527-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա, օգոստոսի 4-ի N Մ-691-Ա, սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ջի Էյ Թի Քաթինգ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00866378) հետ 2017 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պոլիվինիլքլորիդից (ՊՎՔ) թվով 10 հատ մարդուկի պատրաստում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Կանադայի քաղաքացի Ալինա Կոչէրեանի (անձնագիր՝ HM919610) հետ 2017 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ N 01-11.09.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խմբագրման, սրբագրման, թարգմանչական, լուսաբանման և այլ համանման ծառայությունների մատուցում՝ 2,152,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) ԱՄՆ-ի քաղաքացի Գարի Ռոբերտ Շվարցի (անձնագիր՝ 454064876) հետ 2017 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված՝ N 01-05.09.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,980,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) Իտալիայի Հանրապետության քաղաքացի Մարտին Զարյանի (անձնագիր՝ YA9190126) հետ 2017 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված՝ N 01-13.09.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացի Կատերինա Բիանչինիի (անձնագիր՝ 531432909) հետ 2017 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված՝ N 02-05.09.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) ԱՄՆ-ի քաղաքացի Օքսանա Միրզոյանի (անձնագիր՝ 471650333) հետ 2017 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված՝ N 02-02.10.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 80,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-938-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17177-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 06/3-8/37568-17 ու հոկտեմբերի 10-ի N 06/3-8/40759-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագրի մասին» N Մ-1228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՊԱՐԳԵՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 90281903) 2017 թվականի հուլիսի 01-ին կնքված՝ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կաթնամթերքի մատակարարում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-939-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-715-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 24-ի N 01.1/14-2/19191-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի N 06/3-8/42786-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի զբոսայգու վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-715-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 9-րդ կետի 1-ին ենթակետում «2017 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «2017 թվականի հոկտեմբերի 31-ը» բառերով.

2) ծրագրի 10-րդ կետի 7-րդ ենթակետում «22,800,000 դրամ» բառերը փոխարինել «22,288,000 դրամ» բառերով, իսկ 8-րդ ենթակետում «նյութերի ձեռքբերում՝ 700,000 դրամ» բառերը՝ «նյութերի ձեռքբերում և խաղահրապարակի սարքավորումների պատրաստում ու տեղադրում՝ 1,212,000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝



1) «Մագնոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2017 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկական խաղահրապարակի սարքավորումների պատրաստում և տեղադրում՝ 512,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՎԵԿՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2017 թվականի սեպտեմբերի 25-ին կնքված՝ N ՎՏՀ/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե երեսապատման սալիկների ձեռքբերում՝ 420,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-940-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԵՀԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 01.1/14-2/18905-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 17-ի N 06/3-8/42054-17 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 20-ի -ի N 05/14/18757-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 26,651,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հարակից տարածքի ոռոգման համակարգի նախագծում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Իռատեկ Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00872396) 2017 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված՝ N 001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջնիածնի վեհարանի հարակից կանաչապատվող հողատարածքի ավտոմատ ոռոգման համակարգի նախագծման և տեղակայման աշխատանքների իրականացում՝ 26,651,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(Արձանագրություն թիվ 09-2/17)
29 սեպտեմբերի 2017թ.

Հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հարակից տարածքի ոռոգման համակարգի նախագծում և տեղակայում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հարակից տարածքի ոռոգման համակարգի նախագծում և տեղակայում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հոգևոր բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 26,651,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանություն: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ավտոմատ ոռոգման համակարգի նախագծման և տեղակայման աշխատանքներ՝ 26,651,000 դրամ:<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը: |

2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Իռատեխ Սերվիս» ՍՊ ընկերության կողմից ավտոմատ ոռոգման համակարգի նախագծման և տեղակայման աշխատանքների իրականացում - 9,912 քմ՝ 26,651,000 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնտեսական բաժնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-941-Ա
քաղ. Երևան

## «ԱՌՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/18710-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/42158-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N ՆՁ/22.2/12982-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ամերիկահայ բարերար Ստիվեն Քաշյանի կողմից որպես օժանդակություն «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով, կազմակերպության բարեգործական դեղատան համար ուղարկված դեղորայքի (2 տեղ, 53.4 կգ ընդհանուր քաշով, 50,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Դեղորայքի ճշտված ցանկ (ներմուծված 09.10. 2017թ.)

| N | Medicine | | Dosage | Quantity | Exp. date |
|---|---|---|---|---|---|
| 1 | Amitiza(lubiprostone)caps | N4 | 8mcg | 8 | 01//20 |
| 2 | Amitiza(lubiprostone)caps | N4 | 24mcg | 8 | 05//20 |
| 3 | Benicar (olmesartan) tab | N7 | 40mg | 2 | 02//18 |
| 4 | Calcium D3 | N220 | 1200mg | 1 | 09//18 |
| 5 | Dexilant(dexlanzoprazole)cap | N5 | 60mg | 6 | 01//20 |
| 6 | Edarbi (azilsartan) | N7 | 80mg | 5 | 03//18 |
| 7 | Edarbi (azilsartan) | N7 | 40mg | 5 | 02//20 |
| 8 | Edarbi (azilsartan) | N7 | 40mg | 3 | 10//20 |
| 9 | Edarbi chlor (azilsartan) | N7 | 40/12,5mg | 6 | 12//19 |
| 10 | Edarbi chlor (azilsartan) | N7 | 40/25mg | 7 | 02//20 |
| 11 | Eliquis (apixaban) tab | N7 | 5 mg | 20 | 06//19 |
| 12 | Eliquis (apixaban) tab | N7 | 5 mg | 2 | 10//19 |
| 13 | Eliquis (apixaban) tab | N7 | 5 mg | 5 | 05//19 |
| 14 | Farxiga (dapagliflozin) | N7 | 10mg | 11 | 09//19 |
| 15 | Farxiga (dapagliflozin) | N7 | 10mg | 6 | 06//19 |
| 16 | Farxiga (dapagliflozin) | N7 | 5mg | 10 | 02//20 |
| 17 | Hemorrohoidal ointment | | 2.oz | 5 | 05//19 |
| 18 | Invokana(canagliflozin) | N5 | 300mg | 4 | 07//18 |
| 19 | Jardiance (empagliflozin)tab | N7 | 10mg | 4 | 03//19 |
| 20 | Jardiance (empagliflozin)tab | N7 | 25mg | 3 | 12//18 |
| 21 | Januvia (sitagliptin) tab | N7 | 100mg | 56 | 07//19 |
| 22 | Januvia (sitagliptin) tab | N7 | 100mg | 23 | 06//19 |
| 23 | Januvia (sitagliptin) tab | N7 | 100mg | 21 | 12//19 |
| 24 | Janumet XR (sitagliptin/metformin) | N7 | 100/1000mg | 13 | 07//18 |
| 25 | Janumet XR (sitagliptin/metformin) | N14 | 50/1000mg | 11 | 06//18 |
| 26 | Janumet (sitagliptin/metformin) | N14 | 50/1000mg | 16 | 07//18 |
| 27 | Janumet (sitagliptin/metformin) | N14 | 50/500mg | 9 | 06//18 |
| 28 | Livalo (pitavastatin) tab | N7 | 2 mg | 16 | 01//19 |
| 29 | Livalo (pitavastatin) tab | N7 | 4 mg | 12 | 06//19 |
| 30 | Linzess (linaclotide) cap. | N4 | 72mcg | 12 | 06//18 |
| 31 | Nexium (esomeprazole) cap | N2 | 22.3mg | 40 | 02//19 |
| 32 | Pin-Away (pyrantel) | N1 | 50mg/ml | 4 | 03//18 |
| 33 | Tradjenta (linagliptin)tab | N7 | 5mg | 8 | 11//19 |
| 34 | Tradjenta (linagliptin)tab | N7 | 5mg | 7 | 10//19 |
| 35 | Toviaz (fesoterodine) tab | N7 | 4mg | 5 | 06//18 |
| 36 | Tylenol (acetaminophen) tab | N700 | 500mg | 7 | 02//19 |
| 37 | Vesicare (solifenacin)tab | N7 | 5mg | 8 | 12//18 |
| 38 | Vesicare (solifenacin)tab | N7 | 10mg | 8 | 04//19 |
| 39 | Xarelto (rivaroxaban) tab | N7 | 20mg | 81 | 04//19 |
| 40 | Xarelto (rivaroxaban) tab | N7 | 20mg | 15 | 03//19 |
| 41 | Xarelto (rivaroxaban) tab | N5 | 20mg | 11 | 01//19 |
| 42 | Xarelto (rivaroxaban) tab | N7 | 15mg | 6 | 04//19 |
| 43 | Xarelto (rivaroxaban) tab | N14 | 15mg | 47 | 03//18 |
| 44 | Zantac (ranitidin) tab | N24 | 150mg | 3 | 05//19 |
| 45 | Wilate (Willebrand Factor 8) | N1 | 1000/IU | 264 | 10//18 |

"ԱՌՄ" բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Ռ. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-942-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-715-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 17-ի N 01.1/14-2/18772-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 06/3-8/41347-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի զբոսայգու վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-715-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տաշիր Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06951956) 2017 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 19,020,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-943-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 2**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/14-2/18975-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/42319-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա, օգոստոսի 4-ի N Մ-691-Ա, սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՌԵԴ-ՓՈԻՆԹ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 03312103) հետ 2017 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 230,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Արգենտինայի Հանրապետության քաղաքացի Խուան Մոլինեթի (անձնագիր՝ AAC380266) հետ 2017 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված՝ N 01-06.10.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 550,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-944-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N Մ-855-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 01.1/14-2/18863-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/42336-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-855-Ա որոշման 1-ին կետում «46,649 կգ ընդհանուր քաշով, 27,665.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,344,889 դրամ» բառերը փոխարինել «88,704 կգ ընդհանուր քաշով, 50,509.57 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,632,674 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-945-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-739-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 01.1/14-2/18868-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/42420-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-739-Ա (2017 թվականի սեպտեմբերի 29-ի N Մ-854-Ա որոշման խմբագրությամբ) որոշման 1-ին կետում «265,839 կգ ընդհանուր քաշով, 145,260.68 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,289,710 դրամ» բառերը փոխարինել «357,839 կգ ընդհանուր քաշով, 196,710.69 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 11,189,600 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-946-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-714-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2
**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 20-ի N 01.1/14-2/19002-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի N 06/3-8/42688-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ավազը (5 տեղ, 125,000 կգ ընդհանուր քաշով, 8,125 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Սիսիանի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-714-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ-947-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-017-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/14-2/18974-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 06/3-8/42666-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգում, վերակառուցում և պահպանում» ծրագրի մասին» N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի քաղաքացի Դեաննա Օգանեսյանի (անձնագիր՝ 529136568) հետ 2017 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված՝ N 01-02.10.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Համայնքային այգի» ծրագրի շրջանակներում ձևավորման և կազմակերպման ծառայությունների մատուցում՝ 2,515,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 948 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/18708-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N ՆՉ/22.2/12981-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 16–ի N 06/3-8/41647-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից «ATCC» կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ազդանյութեր, միկրոօրգանիզմներ՝ 1 տեղ, 0.703 կգ ընդհանուր քաշով, 10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 350 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 949 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 01.1/14-2/18397-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N ՆՁ/22.2/12803-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/41385-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից «UK NEQAS» կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (մանրէներ՝ 1 տեղ, 6 կգ ընդհանուր քաշով, 24 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 75,300 դրամ, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 950 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 01.1/14-2/18398-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N ՆՁ/22.2/12805-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/41351-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (պապիլոմա վիրուսի դեմ պատվաստանյութ՝ 2 տեղ, 474 կգ ընդհանուր քաշով, 156,150 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,898 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 951 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 01.1/14-2/18703-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 18-ի N ՆՁ/22.2/12983-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 06/3-8/41784-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ազդանյութեր՝ 2 տեղ, 50 կգ ընդհանուր քաշով, 3,564.96 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 707.56 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 952 -Ա**
**քաղ. Երևան**

**«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 01.1/14-2/18517-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N ՆՁ/22.2/12860-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 03/07-1/14031-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 19–ի N 06/3-8/42506-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Տատյանա Հովհաննիսյանի կողմից, որպես օժանդակություն, «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (բժշկական սարքավորումներ՝ 317,047 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող բժշկական սարքավորումներն օգտագործվելու են վիրավոր զինվորների և զինվորական հաշմանդամների վերականգնողական կենտրոնում, որը գործելու է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական հասարակական կազմակերպության համատեղ գործունեության մասին պայմանագրի հիման վրա:

2. «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 953 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 01.1/14-2/17654-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 3-ի N 06/3-8/39479-17 ու հոկտեմբերի 27-ի N 06/3-8/43911-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Մուսկարի» ասոցիացիայի կողմից Հայաստանում Իտալիայի Հանրապետության պատվավոր հյուպատոսի գրասենյակի հասցեով ստացված բեռի (երգեհոն՝ 12 տեղ, 2,100 կգ ընդհանուր քաշով, 9,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,196 եվրո, «Հյուսիսային» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող երգեհոնն անհատույց հանձնվելու է Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմին:

2. Հայաստանում Իտալիայի Հանրապետության պատվավոր հյուպատոսի գրասենյակին՝ նշված բեռը Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմին անհատույց հանձնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**